

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻՑ

Հրանտ Նազարյան

ՀՀ ՄԴ անդամ

Ժողովրդավարական համակարգերի զարգացման ներկայիս պրակտիկան, հատկապես նորանկախ պետություններում, պահանջում է պետական եւ հասարակական վերահսկողության ինստիտուտների մշտական կատարելագործման անհրաժեշտություն: Իսկ այդ վերահսկողության՝ միջազգային պրակտիկայում կիրառվող ձեւերի, մեթոդների եւ առարկայի ընտրությունն անհրաժեշտաբար պետք է բխի տվյալ պետության եւ հասարակության զարգացման փուլային խնդիրներից եւ ուղղակիորեն կոչված լինի նպաստելու մարդու իրավունքների, սահմանադրական կարգի կայունության պաշտպանության բնագավառներում առկա հիմնախնդիրների լուծմանը: Այդ վերահսկողության ինստիտուցիոնալ համակարգում իր առանձնահատուկ կարեւոր դերն ունի սահմանադրական դատական վերահսկողության գործառույթը, որի իրականացման սահմանադրաիրավական երաշխավորված անխախտելիությամբ է նաեւ պայմանավորված պետական իշխանության ժողովրդավարացման գործընթացի հաջողությունը:

Ընդհանրապես, երբ խոսք է գնում պետաիրավական համակարգերի կատարելագործման եւ այդ բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրման եւ ներդրման վերաբերյալ, տեսական եւ գործնական առումներով առավել հաճախ խնդիր է ծագում այլ համակարգերից «ներմուծվող» ինստիտուտների՝ տվյալ իրավահամակարգում համատեղելիության հարցի շուրջ, պայմանավորված տարբեր երկրներում առկա պետաիրավական, հասարակական ինստիտուցիոնալ համակարգերի առանձնահատկություններով: Եվ որպես անհամատեղելիության գործոն վերջերս հաճախ փաստվում է, օրինակ իրավունքի, այսպես կոչված, «անգլոսաքսոնական» (կամ «անգլոամերիկյան») եւ «ռոմանոգերմանական» (կամ «մայրցամաքային») համակարգերի միջեւ առկա տարբերությունները: Վերջինըս ամենեւին վիճելի չէ: Սակայն, այդ համակարգերի միջեւ պատմականորեն առկա տարբաժանը ժողովրդավարական զարգացումների ներկայիս գործընթացներում, եւ

հատկապես Եվրոպայում, դարձել է հարաբերական: Այդ է վկայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Լյուքսեմբուրգի դատարանի պրակտիկան եւ դրան նպաստող այն հսկայական ազդեցությունը որ տարբեր երկրներում ունեն սահմանադրական արդարադատական համակարգերը: Անգլոսաքսոնական եւ ռոմանոգերմանական իրավահամակարգերի մերձեցման միտումներն Եվրոպայում ունեն նաեւ իրենց մեկ այլ բացատրությունը, դրանք պայմանավորված են այդ մայրցամաքում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներով, որոնց արդյունքում օրախնդիր հարցադրումներ են առաջադրվում նաեւ հայ տեսաբանների համար՝ կապված եվրոպական իրավահամակարգային միասնականացման գործընթացները եւ ՀՀ-ում սահմանադրաիրավական փոփոխությունների ու վերջինիս հետ կապված օրենսդրության հետագա զարգացման հնարավոր ուղղությունները կանխատեսելու օբյեկտիվ անհրաժեշտության հետ:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական փոփոխությունների եւ մասնավորապես՝ դատաիրավական բարեփոխումների տեսանկյունից, կարծում ենք, եվրոպական իրավահամակարգի ներկայիս զարգացումները ոչ միայն հնարավոր այլեւ անհրաժեշտ են դարձնում կատարել համակողմանի ուսումնասիրություններ՝ վեր հանելու համար այն օրինաչափությունները եւ առանձնահատկությունները որոնք հատուկ են անգլոսաքսոնական իրավահամակարգին, մասնավորապես՝ սահմանադրական արդարադատության բնագավառում, նպատակ ունենալով ՀՀ-ում ոչ թե պարզապես տեղայնացնել միջազգային փորձը, այլ՝ ուսումնասիրելով սահմանադրական դատական վերահսկողության առավել զարգացած համակարգերի ինստիտուցիոնալ գործունեության տրամաբանությունը, գտնել ՀՀ-ում այդ գործառույթի իրականացման արդյունավետության բարձրացման ուղիներ: Այս առումով, կարծում ենք, ուսանելի է հատկապես Միացյալ Նահանգների՝ առաջին ժողովրդավարական պետության փորձը, որտեղ պետաիրավական պրակտիկայում առաջին անգամ սահմանադրական եղանակով ճանաչվեցին մարդու իրավունքները, ստեղծվեցին դրանց պաշտպանության սահմանադրաիրավական գործունե երաշխիքներ, առաջին անգամ գործադրվեց սահմանադրական դատական վերահսկողության դասական օրինակ, որն իր հսկայական ազդեցությունն ունեցավ տարբեր իրավահամակարգերում այդ ինստիտուտի հետագա զարգացման գործում:

Սահմանադրական դատական վերահսկողության ինստիտուտը ներկայումս ներդրված է աշխարհի շուրջ 150 պետություններում: Մեծամասամբ այդ վերահսկողությունն իրականացվում է պետական հատուկ իրավասության մարմինների (սահմանադրական դատարանների, խորհուրդների եւ այլն) կողմից, այլ կերպ՝ կենտրոնացված համակարգով: Այդպիսի համակարգ ներդրված է հիմնականում եվրոպական կամ ինչպես ընդունված է՝ իրավունքի մայրցամաքային (ռոմանոգերմանական) համակարգի պետություններում: Առավել սակավ այդ վերահսկողությունն իրականացվում է ապակենտրոն, կամ ինչպես ընդունված է անվանել՝ ամերիկյան համակարգով, ընդհանուր իրավասության դատարանների կողմից:

Համեմատական վերլուծությունը վկայում է, որ սահմանադրական դատական վերահսկողության ամերիկյան համակարգը ճշտությամբ վերարտադրված չէ եւ ոչ մի պետությունում, ունի բացառիկ առանձնահատկություններ ու նկատելիորեն տարբերվում է այդ վերահսկողության գոյություն ունեցող մյուս բոլոր համակարգերից: Սահմանադրական արդարադատության ամերիկյան համակարգին առավել մերձեցում նկատվում է միայն Ավստրալիական Դաշնությունում եւ Կանադայում, որը պայմանավորված է այդ պետությունների ծագման եւ զարգացման առանձնահատկություններով եւ իրավունքի անգլոսաքսոնական համակարգի հետ ունեցած պատմական առավել սերտ առնչությամբ:

Ամերիկյան սահմանադրական դատական վերահսկողության առանձնահատկությունները, մեր կարծիքով, առավել դիտարկելի են հետեւյալ տեսանկյուններից. ԱՄՆ-ում այդ առանձնահատկությունը նախ, պայմանավորված է ընդհանուր եւ սահմանադրական արդարադատական գործառույթների համատեղմամբ, որի արդյունքում ամերիկյան առաջին ատյանի ցանկացած դատարան իրավասու է սահմանադրականության հարցով որոշում կայացնել,¹ երկրորդ, Միացյալ Նահանգները անգլոսաքսոնական իրավահամակարգի դասական պետություն է (Մեծ Բրիտանիայից հետո), որտեղ ոչ միայն ժառանգվեցին բրիտանական նախադեպային իրավունքի սկզբունքները, այլեւ որակապես զարգացվեցին,

¹ Նկատի է ունեցվում նահանգային եւ դաշնային դատական համակարգի, այսպես կոչված, գրավոր քննության՝ ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ սահմանափակ (հատուկ) իրավագործության ցանկացած դատարան: Իսկ որոշ նահանգներում սահմանադրական վերահսկողություն կարող են իրականացնել նաեւ հաշտարար դատարանները:

հաղթահարվեց դրանց պահպանողական բնույթը եւ հարմարեցվեցին ամերիկյան նորանկախ պետության զարգացման օրինաչափություններին, էրրորդ, իրավունքի գերակայման սկզբունքը, որով ի սկզբանե առաջնորդվում են ամերիկյան դատարանները, նույնպես պայմանավորում է սահմանադրական արդարադատության ամերիկյան առանձնահատկությունը, միաժամանակ երաշխավորելով այդ գործառույթի անկախ, անկողմնակալ, արդյունավետ իրականացում, եւ չորրորդ, սահմանադրական արդարադատությունը Միացյալ Նահանգներում ենթարկվում է միջազգային պրակտիկայում աննախադեպ հասարակական վերահսկողության, որով նաեւ պայմանավորված է դատարանների նկատմամբ ամերիկյան հասարակության ունեցած կայուն վստահությունը:

Անհրաժեշտ է փաստել նաեւ սահմանադրական դատական վերահսկողության ինստիտուտի տեսական ըմբռնման առանձնահատկությունն ԱՄՆ-ում, որը պայմանավորված է այդ գործառույթի իրականացման ինստիտուցիոնալ լուծումներով եւ մասնավորապես՝ ընդհանուր եւ սահմանադրական արդարադատական գործառույթների համատեղմամբ:

Սահմանադրական իրավունքի ամերիկյան տեսությունը սահմանադրական դատական վերահսկողության ներքո դասում է դաշնային եւ նահանգային սահմանադրաիրավական նորմերի դատական մեկնաբանման եւ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցի որոշման գործառույթները՝ դիտարկելով դրանք, այսպես կոչված, **դատական վերահսկողության** (Judicial review) տիրույթում, քանի որ նկատի է ունեցվում այն հանգամանքը, որ սահմանադրական վերահսկողությամբ ամերիկյան դատարաններն ընդհանուր արդարադատական լիազորությունների շրջանակներում, կոնկրետ գործերով, իրականացնում են նաեւ վերահսկողություն վարչական մարմինների գործունեության, ստորադաս դատարաններում արդարադատության իրականացման օրինականության բնագավառներում, այսինքն՝ ԱՄՆ-ում սահմանադրական դատական վերահսկողության առարկա են նաեւ վարչաիրավական վեճերի վերաբերյալ տարաբնույթ գերատեսչությունների կողմից ընդունված որոշումները, քրեական կամ քաղաքացիական գործերով կայացված դատական որոշումները: Ուստի, սահմանադրական դատական վերահսկողությունն ԱՄՆ-ում, առանց բացառությունների, ընդգրկում է

հասարակական հարաբերությունների բոլոր բնագավառները, այլ կերպ՝ այն **համընդգրկուն է:**

Այսպիսով, ԱՄՆ-ում դաշնային եւ նահանգային մակարդակներով սահմանադրական վերահսկողության կարող են ենթարկվել:

1. սահմանադրական (նահանգային) նորմերը, գործող բոլոր օրենքներն ու ենթաօրենսդրական (նորմատիվ իրավական) ակտերը՝ անկախ դրանք ընդունած մարմիններից եւ պաշտոնատար անձանցից, ընդունման ժամանակից, գործողության բնագավառից եւ կարգավորման առարկայից,

2. իշխանության գործադիր բոլոր մարմինների, դրանց պաշտոնատար անձանց գործողությունները,

3. արդարադատական գործունեությունը (վերադատության կարգով):

Նկատենք, որ արդարադատական գործունեության սահմանադրականության որոշումն այն էլ՝ դատական իշխանության կողմից, ամերիկյան սահմանադրական դատական վերահսկողության համակարգի բացառիկ առանձնահատկությունն է, որը սահմանադրական իրավունքի տեսության կողմից լուրջ ուսումնասիրման կարիք ունի: Կարծում ենք, սահմանադրական փոփոխությունների (դատաիրավական բարեփոխումների) շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարան-ընդհանուր (հատուկ) իրավասության դատարաններ ինստիտուցիոնալ փոխգործակցության սկզբունքների հստակեցմամբ, ընդհանուր արդարադատական գործունեության սահմանադրականության որոշման գործառույթը ՀՀ արդարադատական պրակտիկայում ներդրման որոշ հեռանկարներ ունի, քանի որ կնպաստի ոչ միայն դատական համակարգի անկախության եւ արդարադատության արդյունավետության բարձրացմանը, այլեւ՝ ներհամակարգային օրինականության ամրապնդմանը, եւ ի վերջո՝ մարդու իրավունքների արագ ու առավել արդյունավետ պաշտպանությանը:

Սակայն, մեր կարծիքով, ընդհանուր արդարադատական գործունեության սահմանադրականության որոշման գործառույթի ներդրումը ՀՀ դատական համակարգի հետագա ժողովրդավարացման գործընթացում կունենա իր դրական ազդեցությունը միայն որոշակի սկզբունքների պահպանման պարագայում: Նախ, այդ գործառույթն իր բովանդակությամբ չպետք է փոխարինի ընդհանուր արդարադատական գործունեությանը: Այդպիսի գործերով սահմանադրական

դատական վերահսկողությունն ըստ ձեւի պետք է լինի **կոնկրետ**, հիմնվի ընդհանուր (հատուկ) իրավասության դատարանում հետազոտված փաստական հանգամանքների վրա: **Երկրորդ**, ընդհանուր (հատուկ) իրավասության դատարանի որոշման (վճիռ, դատավճիռ, որոշում) սահմանադրականության հարց կարող է բարձրացվել միայն դատավարական օրենսդրությամբ նախատեսված փուլային վերաքննությունից հետո (վերաքննում, վճռաբեկ վերաքննություն): **Երրորդ**, այդպիսի գործերով սահմանադրական դատարանը, մեր կարծիքով, պետք է տա եզրակացություն, որի հիման վրա էլ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը դատավարական (քրեական, քաղաքացիական) օրենսդրությամբ նախատեսված կարգով պետք է գործով ըստ էության կայացնի համապատասխան որոշում (բեկանման կամ ուժի մեջ թողնելու): **Չորրորդ**, այսպիսի գործերով ՀՀ սահմանադրական դատարանն ղիմող սուբյեկտներ կարող են լինել ՀՀ գլխավոր դատախազը, ինչպես նաև այն անձինք (ֆիզիկական եւ իրավաբանական), որոնք անմիջականորեն շահագրգռված են գործի ելքով եւ դատավարության կողմ են հանդիսացել: **Հինգերորդ**, ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենքով պետք է նախատեսվի այն հարցերի սպառիչ շրջանակը, որն ընդհանուր արդարադատական գործունեության սահմանադրականության որոշման գործերով քննության առարկա է լինելու: Այսպիսի գործերով, կարծում ենք, պետք է օրենսդրությամբ կարգավորման ենթարկվի նաև ՀՀ սահմանադրական դատարան-ՀՀ արդարադատության խորհուրդ-ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ հարաբերությունները՝ դրանց տալով ինստիտուցիոնալ բնույթ:

Տեսական եւ գործնական հետաքրքրություն է ներկայացնում նաև ԱՄՆ նահանգային սահմանադրական նորմերի սահմանադրականության որոշման գործառույթն ամերիկյան դաշնային դատարանների կողմից, որը, մեր կարծիքով, սահմանադրաիրավական համապատասխան կարգավորման պարագայում նույնպես կարող է ներդրվել ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկայում, տվյալ դեպքում՝ **նախնական** սահմանադրական վերահսկողության ձեւով ապահովելով սահմանադրական նորմերի նախագծերի սահմանադրականության որոշման հնարավորություն ՀՀ սահմանադրական դատարանի կողմից:

Ինչպես իրավական մյուս համակարգերում, այնպես էլ ԱՄՆ-ում, նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության որոշումը սահմանադրական

դատական վերահսկողության առանցքային հարցն է, որի միջոցով էլ գլխավորապես իրականացվում է սահմանադրական կարգի, մարդու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանություն: Այդ գործառույթի ամերիկյան առանձնահատկությունը՝ պայմանավորված նախադեպային իրավահամակարգի առկայությամբ, սահմանադրական արդարադատության ինստիտուցիոնալ ընդհանուր առանձնահատկություններին զուգահեռ, դրսևորվում է նախ, իրավանորմի սահմանադրականության վերաբերյալ դատական որոշման կիրառման բնագավառում: Ի տարբերություն մայրցամաքային իրավահամակարգի, հակասահմանադրական ճանաչված իրավանորմը, որպես ընդհանուր նշանակության իրավական ակտ, իր ուժը չի կորցնում, չնայած՝ դառնում է անկիրառելի եւ իրավահարաբերության ոչ մի սուբյեկտ այդպիսի նորմը գործադրել չի կարող, քանի որ դատական որոշմամբ, այսուհետ, այն զրկված է պետական հարկադրանքի ուժից, մասնավորապես՝ դատական պաշտպանությունից, քանի որ սահմանադրականության վերաբերյալ դատական որոշումը, որն ուժի մեջ է մտել, դառնում է նախադեպային իրավունքի աղբյուր եւ պարտադիր է կիրառման դատական պրակտիկայում: Բացի այդ, իրավանորմը հակասահմանադրական ճանաչելու մասին դատական որոշման փաստով, այդպիսի նորմ ընդունած մարմինը չի պարտավորվում անդրադառնալ իր իսկ կողմից հրապարակած ակտի իրավաբանական ուժը կորցրած ճանաչելու խնդրին, այդպիսի գործառնական խնդիր իր որոշմամբ այդ մարմնին չի առաջադրում նաեւ դատարանը: Սակայն, դատական այդպիսի որոշումը պարտադիր է կատարման տվյալ գործով դատաքննության կողմերի համար:

ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկայում զարգացման հեռանդկարներ կարող են ունենալ նաեւ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանման ամերիկյան նախադեպային որոշ սկզբունքներ: Դրանք ՀՀ-ում նորմատիվ ակտերի դատական մեկնաբանման գործառույթի իրավական հատակ կարգավորման, ինչպես նաեւ սահմանադրական արդարադատության մասով՝ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում մանրամասնելու պարագայում, դատական իշխանության անկախության զարգացման եւ դրա հետագա ամրապնդման լրացուցիչ նախադրյալներ կստեղծեն: ԱՄՆ-ում կիրառվող այդպիսի սկզբունքներն են.

1. նորմատիվ իրավական ակտը պետք է համապատասխանի սահմանադրության «տառին» եւ «ոգուն» (իմաստին),

2. նորմատիվ իրավական ակտը պետք է բովանդակի օրենսդիր մարմնի կողմից նախորոշված այնպիսի նորմեր եւ այն ծավալով, որպիսիք սահմանադրորեն անհրաժեշտ են հասարակական տվյալ հարաբերության լիարժեք կարգավորման համար,

3. նորմատիվ իրավական ակտում միանգամայն պարզորոշ պետք է հաստատագրվեն սահմանադրորեն անհրաժեշտ իրավական կարգավորման կոնկրետ սկզբունքներ եւ չափանիշներ,

4. նորմատիվ իրավական ակտով չեն կարող սահմանվել իրավական կարգավորման այնպիսի օբյեկտներ, որոնք դուրս են այդպիսի ակտ ընդունած մարմնի սահմանադրական լիազորությունների շրջանակից,

5. նորմատիվ իրավական ակտը, աներկբայորեն, պետք է բավարարի «բանականության, արդարության եւ հավասարության» սկզբունքներին: Վերջինը, թերեւս, կարելի է ընդունել որոշ վերապահումներով՝ կախված ՀՀ-ում այդ սկզբունքների ընկալման սահմանադրաիրավական իմաստից:

Իհարկե, պնդել, թե վերոթվարկյալ սկզբունքներն ամբողջությամբ անհայտ են ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկային, ճիշտ չէ: Սահմանադրականության վերաբերյալ իր որոշումներով ՀՀ սահմանադրական դատարանն ելնում է ոչ միայն սահմանադրաիրավական նորմերի տառացի, այլեւ՝ իմաստային բովանդակությունից, անխուսափելիորեն մեկնաբանելով նաեւ թե՛ վիճարկվող նորմատիվ ակտը եւ թե՛ Սահմանադրությունը:

Մյուս կողմից, դատական նախադեպի ինստիտուտի բացակայության պայմաններում էլ, մեր կարծիքով, ՀՀ-ում սահմանադրության, միջազգային պայմանագրերի, ինչպես նաեւ օրենքների մեկնաբանման դատական գործառույթների իրավական հստակ կարգավորման դեպքում, դատարաններին հնարավորություն կտրվի արդարադատությունն իրականացնել առավել անկաշկանդ եւ արդյունավետ, որոշումներ կայացնելիս հիմնվել ոչ միայն իրավական ակտերի տեքստային բովանդակության, այլեւ՝ միջազգային իրավունքում ճանաչված հանրահայտ նորմերի եւ սկզբունքների վրա, ինչը մասամբ նկատվում է ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայում: Դրանով նաեւ, մեծապես կընդլայնվի իրա-

վունքի գերակայման սկզբունքի արմատավորման եւ զարգացման հնարավորություններն արդարադատական պրակտիկայում, որը, մեր համոզմամբ, սահմանադրաիրավական համապատասխան կարգավորման պարագայում, լրացուցիչ նախապայման է նաեւ՝ ՀՀ-ում դատական իշխանության իրական անկախությունն ապահովելու համար:

ՀՀ-ում սահմանադրական արդարադատական պրակտիկայի հետագա զարգացման առումով տեսական եւ գործնական հետաքրքրություն է ներկայացնում նախադեպային իրավունքով հաստատված այնպիսի սկզբունքների կամ նախապայմանների գործադրումը, առանց որոնց ամերիկյան դատարաններում սահմանադրականության հարց քննվել չի կարող: Այդպիսով, սահմանադրականության հարց քննության ընդունելիս, ամերիկյան դատարանները դրսեւորում են առավել հաշվենկատություն՝ ապահովելով նաեւ սահմանադրական արդարադատական գործառույթի, որպէս սահմանադրաիրավական հարաբերությունների կարգավորման միջոցի, արդյունավետ իրականացում, միաժամանակ, դիմող սուբյեկտներին զերծ պահելով սահմանադրականության հարցի դատական անհիմն վիճարկումներից: Այդպիսիք ՀՀ-ում անհրաժեշտ կլինեն հատկապէս անհատական սահմանադրական դիմումների քննության իրավական պրակտիկայի ներդրման դեպքում, այսպէս կոչված, ֆիլտրացիոն մեխանիզմներ ստեղծելու առումով: Նման բավարար մեխանիզմների բացակայությունը, օրինակ, բացասաբար է ազդում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայիս պրակտիկայի վրա, կապված տասնյակ հազարների հասնող անհատական դիմումների կուտակման փաստով:

Ամերիկյան դատական պրակտիկայում սահմանադրականության հարց, որպէս կանոն, քննության ընդունվել չի կարող, եթե.

1. գոյություն չունի անձի սահմանադրաիրավական կարգավիճակի խախտման փաստ կամ այդպիսին առաջանալու ակնհայտ վտանգ, որի ապացուցման իրավական պարտականությունը կրում է այդ անձը,

2. գոյություն չունի պատճառահետեւանքային հստակ արտահայտված կապ անձի սահմանադրաիրավական կարգավիճակի եւ դրա խախտման փաստի կամ այդպիսի փաստի առաջացման իրական վտանգի միջեւ, ինչպէս նաեւ վերջիններին եւ պատասխանողի գործողության կամ անգործության միջեւ,

3. Բացակայում է դատավարության շահագրգիռ կողմի հստակ արտահայտված կամահայտությունն ուղղված դատարանին՝ սահմանադրականության հարց քննելու վերաբերյալ: Խոսքը վերաբերում է դատավարական ընթացակարգային ընդհանուր կանոններով դատարանին՝ կողմի բանավոր կամ գրավոր դիմումի մասին,

4. սահմանադրականության հարցի վերաբերյալ բացակայում է վեճը կողմերի միջև, այսինքն, այն դեպքերում, երբ դատաքննության ընթացքում կողմերը հաշտվում են որոշակի պայմանների շուրջ, ապա սահմանադրականության հարց այլևս չի քննվում,

5. վիճարկվող հարցում պարզորոշ առկա չէ շահագրգիռ անձի գույքային, ոչ գույքային շահը, կամ հարցի լուծման ելքում բացակայում է այդ անձի իրավական շահը,

6. վիճարկվում է «քաղաքական հարց»՝ անկախ նրանից, թե որքանով է առնչվում սահմանադրականության խնդրին:

Այստեղ նախ, հարկ ենք համարում անդրադառնալ դատական իշխանություն-քաղաքականություն հիմնախնդրին, որպես այդ իշխանության իրական անկախության եւ գործունակության մակարդակը բնութագրող գործոնի: Այն ՀՀ-ում ժողովրդավարական զարգացումների ընդհանուր գործընթացում կարելի է գնահատել որպես հրատապ պետաիրավական խնդիր:

Ամերիկյան սահմանադրական իրավունքի տեսությունը եւ նախադեպային պրակտիկան կտրականապես մերժում են քաղաքական բնույթի վեճերի լուծման իրավաչափությունը դատարանում, դիտարկելով այն որպես իշխանությունների տարանջատման սահմանադրաիրավական սկզբունքի կոպիտ խախտում, գտնելով, որ քաղաքական բնույթի վեճերը ենթակա են լուծման բացառապես քաղաքական իշխանության մարմինների կողմից: Միաժամանակ, ինչպես գտնում են ամերիկյան որոշ տեսաբաններ, սահմանադրականության հարցի քննությամբ անհնար է խուսափել քաղաքական խնդիրների հետ առնչություններից: Այդպիսի դեպքերում, ըստ նրանց, արդարադատության խնդիրն է՝ խուսափել քաղաքականության ոլորտ ներքաշվելուց, թեեւ սահմանադրականության յուրաքանչյուր հարցի քննություն արդյունքում կարող է հանգեցնել քաղաքական հետեւանքների, ինչպես եւ, սահմանադրականության հարց կարող է առաջանալ նաեւ քաղաքական բնույթի վեճից: Ամերիկյան տեսաբանների կարծիքով դատարանների

սահմանադրաիրավական խնդիրն է, բոլոր դեպքերում, **քննության ընդունել իրավական վեճ եւ գործով որոշում կայացնելիս առաջնորդվել բացառապես իրավունքի նորմերով:**

Սահմանադրական իրավունքի ամերիկյան ճանաչված տեսաբաններ Ն.Ռիդլի-չը, Բ.Շվարցը եւ Ջ.Աթանասիոն ԱՄՆ սահմանադրական իրավունքի հիմնահարցերին նվիրված իրենց համատեղ աշխատությունում ընդհանրացնելով ամերիկյան դատական պրակտիկան եկել են հետեւյալ եզրակացության, որ սահմանադրականության հարցի քննությամբ դատարաններն անխուսափելիորեն բախվում են քաղաքականության խնդիրներին. 1. օտարերկրյա պետությունների ճանաչման, 2. պետական անկախության եւ պետական կառավարման ձեւի, 3. դիվանագիտական հարաբերությունների, 4. աշխարհաքաղաքական խնդիրների, 5. զինված ուժերի օգտագործման, 6. ներպետական օրինականության ապահովման սահմանադրական երաշխիքների, 7. օրինաստեղծ գործունեության իրավական հիմքերի, 8. պաշտոնազրկման գործընթացների հետ կապված գործերով: Եվ, ինչպես եզրակացնում են վերոհիշյալ հեղինակները, ամերիկյան դատարանները խստորեն առաջնորդվելով իշխանությունների տարանջատման սահմանադրաիրավական սկզբունքով՝ մերժում են այնպիսի գործերի քննությունը, որոնցում առկա է քաղաքական վեճ:¹

ՀՀ-ում սահմանադրական արդարադատական պրակտիկան քաղաքական խնդիրների հետ առնչություններում, թերեւս, ցուցաբերում է առավել հաշվենկատություն, հատկապես՝ պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճեր լուծելիս, մասամբ էլ՝ օրենքների սահմանադրականությունը որոշելու գործերով: Սակայն, կարծում ենք, դատական իշխանություն-քաղաքականություն հարաբերությունների բնագավառում ամերիկյան նախադեպային պրակտիկայում արմատավորված սկզբունքները կիրառելի կլինեն մեր համակարգում միայն իրապես անկախ դատական իշխանության գոյության պայմաններում:

Առանձնահատուկ է լրացուցիչ այլ չափանիշներ գոյություն ունեն ամերիկյան դաշնային եւ նահանգային դատարանների կողմից սահմանադրականության հարցի քննության ընդունման խնդրում, սակայն պայմանավորված են ԱՄՆ-ի, որպես

¹ See Norman Redlich, Bernard Schwartz, John Attanasio, Understanding Constitutional Law, Legal Text Series, 1995, pp., 33-36):

դաշնային կառուցվածքի պետության իրողության հետ, ուստի կիրառելի չեն ՀՀ իրավահամակարգում:

Այն հարցին, թե ամերիկյան դատաիրավական պրակտիկայում տեսական եւ գործնական ի՞նչ նշանակություն ունեն սահմանադրականության վերաբերյալ հարցի քննության, մեր կողմից դիտարկված, սկզբունքները (նախապայմանները), կարծում ենք եզրակացությունը հետեւյալն է.

1. նախ, դրանք ապահովում են սահմանադրականության հարցի դատաքննությունն բացառապես այն դեպքերում, երբ առկա է իրական՝ իրավաբանորեն փաստված, անհրաժեշտությունն եւ հնարավորությունն հասարակական տվյալ հարաբերության սահմանադրաիրավական կարգավորման համար, իսկ որոշ դեպքերում այդ անհրաժեշտությունն ուղղակիորեն պետք է թելադրված լինի անձի ազատության, սահմանադրական կարգի ապահովման խնդիրների լուծման, ինչպես նաեւ՝ հասարակական կարծիքի ուժով,

2. այդ նախապայմանների գործադրումը միտված է դատական իշխանության ուշադրությունը կենտրոնացնելու սահմանադրաիրավական առավել հրատապ խնդիրների լուծման վրա, միաժամանակ դատարաններին զերծ պահելով չարդարացված ծանրաբեռնվածությունից, դաշնային եւ նահանգային նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության անհիմն վիճարկումներից,

3. կայուն հիմքեր են ստեղծում դատական իշխանության մարմինների համար իրենց լիազորությունների շրջանակներում ապահովելու իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի անխախտելիությունն ու քաղաքացիների սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը ոչ թե խնդրի քաղաքական, այլ՝ իրավական տեսանկյունից, նպաստելով նաեւ սահմանադրական արդարադատական գործառույթի անկախ եւ անկողմնակալ իրականացմանը,

4. դաշնային եւ նահանգային մակարդակներով ապահովում են սահմանադրական արդարադատական միասնական պրակտիկայի արմատավորումն ու այդպիսի գործերով դատական նախադեպի հետագա զարգացումը:

Սահմանադրականության հարցի քննության նախապայմանները, կարծում ենք, ՀՀ-ում կունենան կիրառման որոշ հեռանկարներ հատկապես՝ անհատական

սահմանադրական դիմումների քննության դատական պրակտիկայի ներդրման դեպքում: Չհիմնավորված դիմումների քննությունից, առավել եւս՝ դրանց կուտակումներից խուսափելու, դրանով իսկ նաեւ՝ սահմանադրական դատական վերահսկողության գործառույթի արդյունավետությունն ապահովելու նպատակով, գործերի նախնական քննության փուլում ՀՀ սահմանադրական դատարանը պետք է մերժի սահմանադրականության հարցի քննությունը, եթե ակնհայտ փաստված չէ դիմումատու անձի սահմանադրաիրավական կարգավիճակի խախտումը կամ այն առաջանալու ակնհայտ վտանգը, կամ, եթե գոյություն չունի պատճառահետեւանքային հստակ արտահայտված կապ այդ անձի սահմանադրաիրավական կարգավիճակի եւ դրա խախտման փաստի կամ այդպիսի փաստի առաջացման իրական վտանգի միջեւ, ինչպես նաեւ՝ վերջիններիս եւ պատասխանողի գործողության կամ անգործության միջեւ, կամ, եթե բացակայում է շահագրգիռ կողմի հստակ արտահայտված կամահայտությունը սահմանադրականության հարց քննելու վերաբերյալ՝ ուղղված դատարանին, կամ որ նունն է՝ բացակայում է անձի, կամ՝ իրավասու անձի դիմումը, ինչպես նաեւ, եթե սահմանադրականության վերաբերյալ բացակայում է վեճը կողմերի միջեւ:

Իհարկե, վերոշարադրյալ սկզբունքները (նախապայմանները) կարիք կունենան հստակեցման սահմանադրական արդարադատության ընդհանուր ընթացակարգային կանոններին համապատասխան, որից հետո միայն կիրառելի կլինեն ՀՀ դատական պրակտիկայում:

Ամերիկյան սահմանադրական արդարադատական համակարգի հաջորդ առանձնահատկությունը դրսեւորվում է **սահմանադրականության հարցով կայացված դատական որոշումների վերանայելիության սկզբունքի կիրառմամբ**: Այն, նույնպես, պայմանավորված է ընդհանուր եւ սահմանադրական արդարադատական գործառույթների համատեղման փաստով:

Իհարկե, սահմանադրական վերահսկողության առարկան, որպես կանոն, հասարակական հարաբերությունների կարեւորագույն (սկզբունքային) բնագավառներն են, քանի որ ուղղակիորեն առնչվում են պետության հիմնական օրենքի՝ սահմանադրության հետ: Ուստի, սահմանադրականության հարցով իրավասու պետական մարմնի որոշումը պետք է առավելագույնս անառարկելի (անվիճելի) լինի, նկատի ունենալով նաեւ հակասահմանադրական իրավիճակի ծագման ուղղակի

հավանականությունը: Իրավունքի մայրցամաքային եւ ամերիկյան համակարգերում սահմանադրականության վերաբերյալ կայացված դատական որոշման վերանայելիության հարցի լուծման արդյունավետությունը գնահատելով նշենք, որ մեր կարծիքով, ամերիկյան համակարգում, ելնելով նաեւ ԱՄՆ-ի՝ որպես դաշնային պետության, իրողությունից, այդպիսի որոշումների վերանայելիության դատավարական հնարավորությունը միանգամայն արդարացված է եւ առավելագույնս նպաստում է նահանգային եւ դաշնային շահերի ներդաշնակման, Միացյալ Նահանգների Սահմանադրության գերակայության եւ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովմանը: Այդ է պատճառը նաեւ, որ դաշնային սահմանադրության առնչությունների հարցով նահանգային գերագույն դատական մարմնի կայացրած որոշումները մի շարք դեպքերում պարտադիր վերաքննելի են ԱՄՆ Գերագույն դատարանում: Բացի այդ, արդարադատության իրականացման ընդհանուր սկզբունքներից ելնելով, սահմանադրականության վերաբերյալ կայացված դատական որոշումների վերանայելիության սկզբունքի կիրառումը, ի վերջո, անհրաժեշտ է նաեւ դատական հնարավոր սխալներից խուսափելու նկատառումներով: Սահմանադրական դատական վերահսկողության բնագավառում դատական որոշումների վերանայելիության սկզբունքը, մեր կարծիքով, **պետք է բացառապես դիտարկել արդարադատական գործառույթի շրջանակներում**: Եվ այնպիսի պրակտիկան, ինչպիսին, օրինակ, գոյություն ունի Ռուսիայում, չի կարող համապատասխանել իշխանությունների տարանջատման սկզբունքին, առավել եւս՝ նպաստել դատական իշխանության անկախության եւ արդարադատության իրականացման արդյունավետության ապահովման ժողովրդավարական ժամանակակից հիմնախնդիրների լուծմանը:¹

ՀՀ պարագայում, սահմանադրական արդարադատական պրակտիկայում դատական որոշումների վերանայելիության սկզբունքը, մեր կարծիքով, կարող է ներդրվել հետեւյալ շրջանակներում. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով հստակ պետք է նախատեսվեն այն բացառիկ դեպքերը եւ դրանց քննության

¹ Որպես մայրցամաքային իրավահամակարգում սահմանադրական վերահսկողության կարգով կայացված դատական որոշումների վերանայելիության համակարգի գործադրման բացառիկ օրինակ կարելի է նշել Ռուսիայի, որտեղ սահմանադրական դատարանի որոշումները կարող են վերաքննության ենթարկվել այդ երկրի պառլամենտի կողմից (այդ մասին մանրամասն տե՛ս Գ.Հարությունյան, Վ.Ստեփանյան, Վ.Հովհաննիսյան Սահմանադրական վերահսկողություն, Երեվան, «Նժար», 1997, էջ 107-108): Այդպիսի պրակտիկա նախկինում գործել է նաեւ Լեհաստանում:

դատավարական կանոնները, համաձայն որոնց սահմանադրական դատարանը հնարավորություն կունենա, կամ՝ պարտավոր կլինի, սկզբնական դիմումի շրջանակներում, անդրադառնալ իր իսկ կողմից կայացված որոշմանը, օրինակ, **նոր ի հայտ եկած հանգամանքների, իրադրության փոփոխության կամ էական դատական սխալի դեպքերում**:¹ Ընդ որում, ենթադրում ենք, որ այդպիսի դեպքերում սահմանադրական դատարանն անվերապահորեն պետք է հաշվի առնի նաև իր որոշման վերանայման իրավական հնարավոր բացասական հետեւանքները սահմանադրաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում, ինչպես նաև՝ գործադրի դրանցից խուսափելու իրավական հնարավոր միջոցներ, որպիսիք, մեր կարծիքով, նույնպես, սպառնիչ պետք է նախատեսվեն օրենքով:

Հաջորդ խնդիրը, որն առաջնահերթ ենք համարում քննարկել ՀՀ սահմանադրական արդարադատության հետագա կատարելագործման թեմայի շրջանակներում, վերաբերում է՝ ՀՀ սահմանադրական դատարան-հասարակություն գործակցական կապի կամ՝ սահմանադրական արդարադատական պրակտիկայում հասարակական մասնակցության ինստիտուտի, զարգացման հեռանկարներին: Առաջին հայացքից թվում է, թե այդպիսի ինստիտուտի ներդրման գործնական անհրաժեշտությունը, այն էլ՝ սահմանադրական դատական վերահսկողության բնագավառում եւ ՀՀ սահմանադրական դատարանի սահմանադրական ներկայիս լիազորությունների պայմաններում, բացակայում է: Սակայն, նկատի ունենալով ՀՀ-ում սահմանադրական փոփոխությունների եւ մասնավորապես՝ արդարադատական համակարգի ժողովրդավարացման (դատաիրավական բարեփոխումների), ինչպես նաև՝ անհատական սահմանադրական դիմումների քննության իրավական պրակտիկայի ներդրման հեռանկարները, կարծում ենք, այդ ինստիտուտի ներդրման իրավական կարգավորումն անհրաժեշտ կլինի ոչ միայն սահմանադրական արդարադատության բնագավառում, այլև՝ ողջ դատական համակարգում, եւ անհրաժեշտ է նաև՝ դատական մարմինների նկատմամբ հասարակական վստահություն արմատավորելու տեսանկյունից: Այդ ինստիտուտի ներդրումը, մեր կարծիքով, ի

¹ Մեր կարծիքով, ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկայում դատական որոշումների վերանայելիության սկզբունքի ներդրման անհրաժեշտությունը թելադրված է նաև ՀՀ դատական համակարգ-Մարդու իրավունքների եվրոպական դատարան ինստիտուցիոնալ հարաբերությունների հեռանկարով, որն անխուսափելի է Եվրոխորհրդի շրջանակներում ընթացող իրավաքաղաքական միասնականացման գործընթացում:

վերջո կնպաստի նաև ՀՀ-ում դատախիշխանական համակարգի ժողովրդավարացման ողջ գործընթացի հաջողությանը:

Միացյալ Նահանգների պրակտիկայում (ինչպես նաև՝ սահմանադրական արդարադատական) դատարան-հասարակություն գործակցությունն իր զարգացման տեսակետից, աննախադեպ է: Այն ունի **ինստիտուցիոնալ համագործակցության, նաև՝ ինստիտուցիոնալ հսկողության** բնույթ, պայմանավորված՝ նախ, դատարաններում քննվող գործերով (այդ թվում՝ սահմանադրականության հարցերով) երդվյալ ատենակալների մասնակցությամբ, դատական համակարգի ձեւավորման, դատավորներին անձեռնմխելիությունից զրկելու եւ պաշտոնագրկելու բոլոր գործընթացներին հասարակության ամենակտիվ մասնակցությամբ, ինչպես նաև՝ դատական մարմինների ինստիտուցիոնալ գործունեության վերաբերյալ հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու առավելագույնս մատչելիությամբ: Ահա այն հիմնական գործոնները, որոնք նաև նպաստում են ԱՄՆ-ում դատական իշխանության նկատմամբ հասարակական բարձր վստահության առկայությանը:

Սակայն, սահմանադրական արդարադատության բնագավառում դատարան-հասարակություն գործակցության այնպիսի ձեւը, ինչպիսին ԱՄՆ-ում երդվյալների մասնակցությունն է, կարծում ենք, չի կարող միանշանակ արդյունավետ համարվել:¹ Ինչու՞, քանի որ.

1. երդվյալներն ընտրվում են պատահականության սկզբունքով՝ քաղաքացիների ընտրական ցուցակների հիման վրա,

2. նրանց նկատմամբ մասնագիտական որեւէ պահանջ չի ներկայացվում եւ որոնք դատարանում իրենց կայացրած որոշումը չեն հիմնավորում եւ որոշման համար որեւէ պատասխանատվություն չեն կրում, ավելին, որպես կանոն, ատենակալները (մասնավորապես դաշնային մակարդակով) իրավաբանական կրթություն ունենալ չեն կարող,²

¹ Նշենք, որ եվրոպական սահմանադրական արդարադատական համակարգում երդվյալների մասնակցություն ընդհանրապես նախատեսված չէ, որը թերեւս պայմանավորված է սահմանադրական արդարադատության, որպես առանձնացված պետաիրավական գործառույթի, առկայությամբ, թեւս որոշ երկրներում երդվյալների ինստիտուտն ունի իր կիրառումն ընդհանուր իրավագործության դատական պրակտիկայում (օր. Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում):

² Ներկայումս նահանգներում դատաիրավական պրակտիկական զարգանում է երդվյալների նկատմամբ կրթական կամ այլ սահմանափակումների վերացման ճանապարհով (թվով մոտ 27 նահանգներում),

3. սահմանադրականության վերաբերյալ գործերով, որպես կանոն, դատարանում հետազոտման են ներկայացվում փաստական այնպիսի հանգամանքներ, որոնք ենթակա են սահմանադրաիրավական բազմակողմանի գնահատման, եւ այդպիսի գործընթացում դատավարության մասնակից երդվյալ ստենակալները պետք է առավել քան դրսեւորեն անհրաժեշտ մասնագիտական հմտություն, փորձ եւ անաչառություն, որպիսիք ապահովելու իրավական եւ փաստական լիարժեք որեւէ հիմք գործնականում գոյություն չունի:¹ Ատենակալներն իրավասու չեն, նույնիսկ, դատարանում հարցադրումներ անել կողմերին, ապացույցներ ներկայացնել, միջնորդություններ հարուցել, այսինքն՝ զրկված են դատավարական հիմնական իրավունքներից:²

Ինչ վերաբերում է դատարան-հասարակություն գործակցության վերը հիշատակված մյուս ձևերին,³ ապա ԱՄՆ-ում դրանց արդյունավետության մասին կարելի է հետեւություններ անել իրենց իսկ՝ ամերիկյան տեսաբանների, անցկացրած հետազոտության արդյունքներից: Փաստվում է, որ այդ գործակցության արդյունքում ամերիկյան հասարակությունն առավել վստահություն է տածում դատարանների, քան պետական իշխանության մյուս մարմինների նկատմամբ՝ գտնելով, որ դատական իշխանությունն է ի գորու լուծելու հասարակության առջեւ ծառայած

եւ նույնիսկ նկատվել են դեպքեր, օրինակ Միչիգան նահանգում, երբ դատավորը պաշտոնեական պարտականություններից դուրս մեկ այլ դատարանում հանդես է եկել որպես երդվյալ ստենակալ (այդ մասին տես William Burnham, Introduction to the Law and Legal system of the United States, St.,Poul,Minn.,1999,p.87):

¹ Ատենակալների պարտականությունների անաչառ կատարման ապահովման թերեւս միակ իրավական միջոցը ընտրվելուց հետո դատարանում նրանց երդում տալն է, որը, մեր կարծիքով, չի կարող երաշխավորել այդ ինստիտուտի գործադրման լիարժեք արդյունավետությունն ինչպես սահմանադրականության, այնպես էլ մյուս գործերով:

² Երդվյալ ստենակալների մասնակցությամբ ամերիկյան դատարանների կողմից սահմանադրականության հարցերի լուծման վերաբերյալ պաշտոնական վիճակագրության բացակայությունը, թերեւս, հնարավորություն չի ընձեռում կատարելու առավել խորքային վերլուծություններ:

³ Դատարան-հասարակություն գործակցության առանձնահատուկ պրակտիկա գոյություն ունի Մեծ Բրիտանիայում եւ հայտնի է «Մակքենզիի եղբայրներ» անվամբ: Այն բրիտանական նախադեպային պրակտիկայում ներդրվել է դեռեւս 1831թ. «Քոլիերն ընդդեմ Հիքսի» գործով, սակայն վերջնականապես հաստատվել է 1970թ. «Մկքենզին ընդդեմ Մակքենզիի» գործով, եւ պայմանավորված է նաեւ անվճար իրավաբանական ծառայությունների մատուցման հնարավորությունները զարգացնելու նկատառումներով: Այդ պրակտիկայի էությունը կայանում է նրանում, որ դատավարության կողմի ցանկությամբ դատաքննությանը կարող է մասնակցել դատական նիստին ներկա գտնվող ցանկացած անձ՝ կատարելով հասարակական պաշտպանի կամ՝ փաստաբան-հուշարարի դեր՝ առանց դատավարական ակտիվ իրավունքների իրականացման (հարցեր տալու, միջնորդություններ անելու, ելույթ ունենալու) (այդ մասին մանրամասն տես, Ingman T., The English Legal Process, 6th Ed., Blackstone Press Limited, 1996):

սոցիալական եւ տնտեսական հիմնախնդիրները: Միաժամանակ, նահանգային մակարդակով հասարակական հստակ ձգտում է նկատվում դատավորների ընտրության համակարգի ընդլայնման միջոցով էլ՝ ավելի զարգացնել դատական իշխանության նկատմամբ իրականացվող հասարակական հսկողությունը, որի արդյունքում դատավորների ընտրության գործընթացը, շատ դեպքերում, վերածվում է **հաշվետու-վերընտրական միջոցառման**՝ նաեւ իր բացասական հետեւանքներով հանդերձ:¹

Իհարկե, ԱՄՆ-ում դատական իշխանության ինստիտուցիոնալ դերի հարցում հասարակական հարաճյուն պահանջմունքների գոյության փաստը, նախ եւ առաջ, վկայում է այդ իշխանության նկատմամբ առկա հասարակական մեծ վստահության եւ այդ իշխանության **ժողովրդավարացման բարձր մակարդակի** մասին, որոնք դատարան-հասարակություն գործակցական շարունակ զարգացող հարաբերությունների արդյունք են, չնայած, այդ իշխանության առջեւ հասարակության կողմից դրվում են արդեն այնպիսի մասշտաբային խնդիրներ, որոնք լուծելի են միայն պետաիշխանական միասնական համակարգի ուժերով:

Անդրադառնալով ՀՀ-ում դատարան-հասարակություն գործակցության ինստիտուտի զարգացման խնդրին, հարկ ենք համարում նշել, որ սահմանադրական եւ ընդհանրապես՝ արդարադատական պրակտիկայում, հասարակության ինստիտուցիոնալ մասնակցության տեսական հիմնախնդիրները բավարար ուսումնասիրված չեն: Գործող օրենսդրությամբ նախատեսված չեն այդպիսի մասնակցության ձևեր: Իսկ դատական քննության հրապարակայնության սկզբունքը, որն ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով, ինչպես նաեւ քաղաքացիա եւ քրեադատավարական օրենսդրությամբ, մեր համոզմամբ, այլեւս չի կարող դիտարկվել որպես ժողովրդավարական համակարգերի զարգացման եւ դատական իշխանության ժողովրդավարացման ժամանակակից պահանջներին բավարարող պայման: ՀՀ Սահմանադրության 91 հոդվածով նախատեսված երդվյալների ինստիտուտի կիրառման պրակտիկայի բացակայությունը թույլ չի տալիս գործնական հարթությամբ մեկնաբանել դրա նպատակահարմարության եւ արդյունավետության խնդիրը, որով, թերեւս, պայմանավորված է նաեւ հասարակական կա-

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Shaping the Future of Justice□ Strategic Planning in the Courts, By John A. Martin, Brenda J. Wagenknecht-Ivey, Steven Weller, and David A.Price, The Judges' Journal, Spring 1997, p.32-41:

յուն կարծիքի բացակայությունը՝ ՀՀ-ում այդ ինստիտուտի գոյության անհրաժեշտության վերաբերյալ: Մեր կարծիքով, ՀՀ պրակտիկայում, ընդհանուր իրավագործության դատարաններում երդվյալների մասնակցությունը կլիներ նվազ արդյունավետ եւ հակացուցված՝ սահմանադրական արդարադատական պրակտիկայում, քանի որ, այդ ինստիտուտի ներդրումն ուղղակիորեն պայմանավորված է ոչ այնքան իրավական-տեխնիկական խնդիրների լուծմամբ, որքան երդվյալների ինստիտուտի նկատմամբ պատմականորեն սկզբնավորված եւ հասարակությունում առկա բարոյահոգեբանական նպաստավոր շարունակական վերաբերմունքի առկայությամբ, ինչպես նաեւ հասարակական մտածելակերպով՝ չթվարկված այն թերությունները, որոնց անդրադարձանք այդ ինստիտուտի ամերիկյան առանձնահատկությունները պարզաբանելիս:

ՀՀ-ում դատարան-հասարակություն գործակցության ինստիտուտի զարգացման կոնցեպցիան, մեր կարծիքով, կարող է ներդրվել հետեւյալ սկզբունքով. այդ գործակցությունն իր նախասկզբնական փուլում **պետք է զարգացնել ողջ արդարադատական համակարգում՝ առանց սահմանադրական եւ ընդհանուր արդարադատական գործառույթների տարբերակման՝ սկզբնապես զարգացնելով այն որպես ինստիտուցիոնալ համագործակցություն, աստիճանաբար ներառելով նաեւ ինստիտուցիոնալ հսկողության տարրեր**, եւ այնպիսի տեմպերով ու բովանդակությամբ, որոնք ներդաշնակ լինեն զարգացման անցումային պետության առջեւ ծառայած հիմնախնդիրների լուծման, ներառյալ՝ հասարակության իրավագիտակցության բարձրացման, ընդհանուր գործընթացներին:

Որպես դատարան-հասարակություն ինստիտուցիոնալ գործակցության նախասկզբնական ձեւեր, մեր կարծիքով, ՀՀ-ում անհրաժեշտ է նախ, **հասարակության մասնակցությունն ապահովել դատական համակարգի ձեւավորման, մասնավորապես՝ դատավորներին պաշտոնում նշանակելու գործընթացներում**: Այն հանգամանքը, թե դատավորի թեկնածուն հասարակական ինչպիսի հեղինակություն է վայելում, կարծում ենք ոչ պակաս կարեւոր է, քան մասնագիտական բավարար ունակությունների հարցը: Միացյալ Նահանգների եւ ժողովրդավարական այլ համակարգերի փորձը հուշում է, որ դատավորին պաշտոնում նշանակելու՝ գործադիր մարմին-Արդարադատության խորհուրդ-ՀՀ Նախագահ ինստիտուցիոնալ գործակցությունն անհրաժեշտաբար պետք է համալրվի հասարա-

կական գործակցության տարրով, եւ լինի առավելագույնս **հրապարակային**: Կարծում ենք նաեւ, այդպիսի սկզբունքով ընտրված դատավորի թեկնածուն պատասխանատվության առավել մեծ զգացումով կստանձնի իր պաշտոնը: **Առավելագույնս հրապարակային պետք է իրականացվի նաեւ դատավորին պաշտոնազրկելու գործընթացը**: Դատավորին պաշտոնում նշանակելու եւ պաշտոնազրկելու հարցերը, կարծում ենք, պետք է լուծվեն ոչ թե խորհրդային ժամանակների կադրային (գաղտնապահության), այլ՝ ժողովրդավարական սկզբունքներով, նկատի ունենալով նաեւ պետական ծառայության բնագավառում դատավորի պաշտոնավարման սահմանադրական ժամկետի անհամեմատ երկարատեւության հանգամանքը եւ այն ինստիտուցիոնալ խնդրի կարեւորությունը, որ դրված է այդ պաշտոնյայի առջեւ:

ՀՀ-ում դատարան-հասարակություն գործակցության զարգացման նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է նաեւ պետական հովանավորությամբ եւ խրախուսմամբ Դատարանների նախագահների խորհրդին, Արդարադատության խորհրդին առընթեր ստեղծել **հասարակական կարծիքի ուսումնասիրման կառույցներ**՝ օրենսդրորեն հստակեցնելով դրանց կարգավիճակը, խնդիրներն ու իրավասության շրջանակները: Այդ կառույցներն անհրաժեշտ կլինեն ոչ միայն արդարադատության առջեւ ծառայած խնդիրների լուծման, այլեւ՝ ողջ դատական համակարգի ժողովրդավարացման գործընթացի նպատակայնությունն ապահովելու համար: Մեր համոզմամբ, պետական իշխանության (այդ թվում նաեւ՝ դատական) ժողովրդավարացումն անհնար է իրականացնել առանց հասարակության ակտիվ մասնակցության՝ դիտարկելով այն բացառապէս իրավատեխնիկական բնույթի խընդիրների լուծման տիրույթում: Միացյալ Նահանգներում, օրինակ, դաշնային մակարդակով գործում են նմանատիպ տասնյակ կազմակերպություններ, որոնք մշտական գործակցական կապ են ապահովում դատական իշխանության եւ հասարակության միջեւ՝ ընդհուպ նպաստելով արդարադատության բնագավառի օրենսդրական փոփոխությունները հասարակական պահանջումներին առավելագույնս համապատասխանեցնելուն, այդ նպատակին ծառայեցնելով նաեւ մասսայական լրատվամիջոցները: